Մրցույթ՝ ՀՀ Տավուշի մարզի Ազատամուտի գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի /ծածկագիր՝ 3.1-2/, առաջին կարգի մասնագետի /ծածկագիր՝ 3.2-1/, երկրորդ կարգի մասնագետի /ծածկագիր՝ 3.3-1/ համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար

01.07.2014

Հայտատու՝ Ազատամուտի գյուղապետարան
«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդված

Տավուշի մարզի Ազատամուտի գյուղապետարանը հայտարարում է մրցույթ գյուղապետարանի աշխատակազմի հետևյալ թափուր պաշտոնները զբաղեցնելու համար.

1. Ազատամուտի գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ /ծածկագիր՝ 3.1-2/
- մասնակցում է համայնքի վարչական սահմաններում գտնվող համայանքային սեփականության հողերի մրցույթների և աճուրդների կազմակերպման աշխատանքներին
- կազմում և ներկայացնում է հողաշինարարական փաստաթղթեր, իրականացնում չափագրումներ
- իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

2. Ազատամուտի գյուղապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /ծածկագիր՝ 3.2-1/
- իրականացնում է գործավարությունը, փաստաթղթային սպասարկումը
- իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ

3. Ազատամուտի գյուղապետարանի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ /ծածկագիր՝ 3.3-1/
- քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին
- հետևում է քարտուղարի հանձնարարականների համապատասխան ժամկետներում կատարման ընթացքին
- իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ

Նշված թափուր պաշտոնները զբաղեցնելու համար պահանջվում է առնվազն միջնակարգ կրթություն, համակարգչով աշխատելու ունակություն, ունեն Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իրենց լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն:

Մրցույթը կկայանա 2014 թվականի օգոստոսի 14-ին ժամը 12:00-ին Ազատամուտի գյուղապետարանի շենքում:

Դիմող ՀՀ քաղաքացիները և փախստականի կարգավիճակ ունեցող անձիք պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝
- դիմում մրցութային հանձնաժողովի անունով, լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս
- տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի պատճենները բնօրինակների հետ միասին
- արական սեռի անձիք նաև զինգրքույքի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը բնօրինակի հետ միասին
- մեկ լուսանկար 3x4 սմ չափի
- անձնագրի պատճենը
Փաստաթղթերը ընդունվում են մինչև 2014 թվականի հուլիսի 22-ը ժամը 09:00-18:00, բացի շաբաթ և կիրակի օրերից, Ազատամուտի գյուղապետարանի աշխատակազմում՝ հեռ. 094 22-51-54 և քաղաք Իջևան Տավուշի մարզպետարանի տարածքային կառավարման վարչություն:
Հասցե ՀՀ Տավուշի մարզ գյուղ Ազատամուտ 1-ին փողոց թիվ 10
Հեռ. +374 94 67-37-26
Էլ. փոստ`azatamut.tavush@mta.gov.am

Հասցե՝ ՀՀ Տավուշի մարզ, գյուղ Ազատամուտ, 1-ին փողոց թիվ 10

Հեռ..՝ +374 94 673726

Էլ. փոստ՝ azatamut.tavush@mta.gov.am